

ԱՐԱՐԱՏ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԹԻՒ Ա. 1868 ՕԳՈՍՏՈՍԻ 1

ԿՐՕՆԱԿԱՆ

ԱՆԸՆԴՀԱՏ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Առաքելական յաջորդութեան Ուղղափառ Ս. Եկեղեցւոյ Հայաստանեայց.

Արդ որովհետև այլ և ուրիշ ոչ սակաւ պատմութիւններով կ՚տեղեկանանք որ մինչև Ս. Լուսաւորիչ՝ տակաւին շատ խաչ չ՚տեսած Հայաստանի դէմ միքանի կողմերը կամ նահանգները ինչպէս Սիւնեաց երկիրը, Գուգարաց աշխարհը քրիստոնէութիւն կար, ըստ որում Լուսաւորիչն և իւր ծննդենէն զկնի 'ի հարկէ քրիստոնէութիւն տեսանելով ինչպէս 'ի Կեսարիա ուսած էր, ուստի դիւրին է մակաբերել և համոզուիլ թէ քրիստոնէութիւնը՝ իւր լոյսը չէ խափանած Հայաստանէն թէ և երբեմն ծածուկ և նուազ, այլ այսու ամենայնիւ յարատևած է և անկորուստ պահուած.

Ուստի եթէ քրիստոնէութիւնը յարա-

տեւ մնացած է 'ի Հայաստան, ապա ուրեմն նորին պաշտօնեաները և սպասաւորներն ևս անշուշտ եղած են, և թէ որ պաշտօնեաներ եղած են, ապա ինքնին կը հետևի որ պաշտօնէից մեծ և գլուխ՝ կամ որ նոյն է, Եպիսկոպոս ալ ունեցած է, որ 'ի հարկէ իւր շուրջը կամ սկիզբը Առաքեալներէն առնելով՝ հետզհետէ յաջորդած են իրարու, և այսպէս առաքելական յաջորդութեան անընդհատ շարունակութիւնը գոնէ՝ մի քանի տեղ (որովհետև Առաքեալը մի հատ չէր՝ որոնք եկան 'ի Հայաստան մեր ազգը լուսաւորելու, և մեկ առաքեալը երեք չորս կամ աւելի տեղեր եպիսկոպոսներ ձեռնադրելով յաջորդներ կ'թողուին) անպակաս յարատեւած է.

Այս յաջորդութեան ժառանգող եպիսկոպոսաց կամ հայրապետաց պատմութիւնը շատ հաւանական է որ՝ այս ինչ կամ այն ինչ ազգաց լեզուներով կամ տառերով 'ի գիր արձանացուցած լինին ժամանակակիցներէն ոմանք, և ժամանակաց և դարուց դառն բերմունքները ու այլ և այլ դժբաղդ անցքերը 'ի կորուստ մատնած որով բաւական ժամանակ անյայտ և իբր 'ի կորուստ մնացած էր ինչպէս ուրիշ բազմատեսակ հնութիւնները և պատմութիւնները, նոյնպէս նա և մեր Հայաստանեայց եկեղեցւոյ առաքելական յաջորդութիւնը ժառանգողաց անունները.

Այժմ գոհութիւն Աստուծոյ այնպիսի լուսաւորեալ և յառաջադէմ դրե_

թէ յամենայնի . . . ժամանակի մի արժանացած ենք, յորում ոչ թէ միայն կորսուած տեսակ տեսակ անյայտ հնութիւններ . . . հետաքրքրութեանց և քննութեանց ջանքերով և աշխատութիւններով կ'պարզուին և 'ի լոյս կ'գան, այլ և որքան և որպիսի զարմանալի և զմայլելի գիւտեր կ'մտածուին և կ'հնարուին, հետևաբար շատ զարմանալի բան մի չէր՝ որ Հայաստանեայց Ս. առաքելական եկեղեցւոյ ալ այս փառքը և պարծանքը որպիսի՝ և իցէ եղանակով՝ երբ և իցէ անտարակոյս 'ի յայտ և 'ի լոյս պիտի գար, և ահաւասիկ՝ ժամանակ առ ժամանակ հետաքրքրուելով և փնտռուելով այս խնդիրը, և ըստ բաւականին պարզուելէն զատ, վերջապէս՝ շնորհիւն Աստուծոյ արժանացանք այս բարեբաղդութեան, որ ժամանակը և հնութիւնը աշխատասիրաց և ազգասիրաց միջոցով կ'յայտնէ Ադդէոս առաքելոց՝ կամ որ նոյն է՝ Թադէոս առաքելոյն յաջորդաց անունները, որով այս խնդիրը մեր առջև ուրախութեան և հոգևոր մեծ պարծանաց շուտով մի ևս կը հարթէ և կը յարդարէ.

Մեր ազգային գիտուն և հմուտ հեղինակներէն ոմանք ջանացած և ցցուցած են՝ որքան որ գտնել կարողացած են, Հայաստանի մէջ առաքեալներէն սկսելով մինչև Ս. Գրիգոր Լուսաւորիչ (1)

Ծան. Գ. (1) Յայտնի է որ խօսքերնիս առաքեալներէն սկսելով մինչև Ս. Լուսաւորիչը մեր եկեղեցւոյ առաքելական յաջորդ եպիսկոպոսաց վրայ է, և ոչ թէ Լուսաւորչէն զկնի յաջոր-

աստին անդին գտնուող Հայրապետներ կամ Եպիսկոպոսներ՝ մեր սուրբ Եկեղեցւոյ առաքելական յաջորդներ. բայց և այնպէս՝ անոնք դարձեալ բուն Նպատակին և խնդրոյն ոգին չ՚կարողանալով լուծել և ՚ի լոյս բերել, հետևաբար կէտ մի կար՝ զոր պէտք էր բացատրել, այսինքն՝ գտնէ առաքեալէ մը գիծ մի բռնելով՝ ուղղակի անկէց յաջորդութիւն մը անոր յաջորդաց անուանքը յայտնելով հաստատել, զոր առնել ևս Թադդէոս առաքեալէն սկսելով գտնել հարկ և արժան էր, նախ՝ ՚ի Կեսարիա Թէոփիլոս եպիսկոպոսը անկէց ձեռնադրութիւն հետևաբար և յաջորդութիւն առնելուն, երկրորդ՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչը ՚ի Կեսարիա Լեոնդիոս հայրապետէն ձեռնադրուած և եպիսկոպոսապետական այսինքն Կաթուղիկոսական իշխանութեան՝ ընդհանուր Հայաստանեայց եկեղեցւոյ առաքելական յաջորդութեան վերանորոգութիւնը ընդունած լինելուն նկատմունքներով.

Արդ խնդրոյն առնել անձկալի և ամենակարևոր այս պարագայն է, զոր մեր այս դուզնաքեայ աշխատասիրութիւնը կը ջանայ լուծել և ՚ի լոյս տալ, առ այժմ՝ որքան կարելի է՝ համառօտ, ուրիշ աւելի յարմար ժամանակի և բարեպատեհ առթի մի թողլով ընդարձակ և կարևոր պատմութիւններով ու խնդիրներով հաստատուած հրատարակել. (կարելի է՝ ո՛ գիտէ, միւս առաքեալներէն ևս ոմանց շարունակ յաջորդութիւնը ժառանգողաց անուններովը կ՚գտնենք մինչև այն ժամանակը):

Այս խնդրոյս մասին մեծ լոյս և օժանդակութիւն կ՚տայ հին ձեռագրքէ մի (որ Ս. Էջմիածնայ մատենադարանէն կ՚նշմարուի) ձգուած և գողցուած երեք հատ թերթերը (1) որ Հայոց ՉՀԹ (779) թուականին, այսինքն՝ ասկէց հինգ հարիւր երեսուն և ութն տարի յառաջ գըրուած է կամ օրինակուած. իսկ մեր առաքելական յաջորդաց անուններու արձանագրութիւնը (ինչպէս անունները ևս ալ անկէց առած և դասակարգած եմ) զոր՝ ինչպէս մէջէն կ՚իմանանք, Սիւնեաց եպիսկոպոս Ստեփաննոս Տարօնեցիէն կամ Սիւնեցիէն հեղինակուած և կամ թարգմանուած ձեռագրքէ մի շատ դժուարութեամբ՝ միայն իւր հետաքրքրութիւնը գոհացնելու անձկութեամբ (կարելի՛ է՝ չը գիտնալով՝ ըստ մեզ ևս անդին գտնէ

գողներուն, թէպէտ և վերջիններուն ալ դասակարգութեան տարբեր տարբեր գրուածքներ կան իրարու հակառակ, ինչպէս այս գրութեան մէջ մեր դասակարգութենէն կը տեսնուի և կը իմացուի.

1. Վերջին անգամ ի Պոլիս գտնուած ժամանակնիս. որ պէտք էր գայինք ի Ս. Էջմ. վեհ. կաթուղիկոսը վերոյիշեալ երեք թերթերը հետը գիրք մ՚ալ, Տօնացոյց Հայաստանեայց եկեղեցւոյ (ՉԼԵ. Հայոց թուականին գրուած ի Սիւնիս) ձեռք բերաւ Պ. Թ. Միհրդատեանցէն Ս. Էջմիածնայ Մատենադարանին մէջ պահելու համար.

մը՝ պատուական հնութիւն մը յիշատակելու համար մեզ) կ՚ընդօրինակէ Ս՚Յ-տազ գաւառին Զաքարիա անուն գիւղը։ Իսկ Պետրոսանոս Պիւնեցին այսինքն Տաթևնեցին. Պետրոսիպայ աշակերտը. որ Ռ՚ը բիստոսի 400—406 թուականին, հինգերորդ դարուն սկզբան միջոցները կ՚ծաղկէր, այսինքն՝ ասկէց 1468 կամ 74 տարի յառաջ, որ ժամանակ որ Պետրոսիպանք կ՚փայլէին, և Հայկազեան տառերը գիտնել կՀգնէր Պ. Պետրոսիպը, ինչպէս որ արժանացաւ, և տակաւին հայոց թուականը վերանորոգուած չէր. ուստի շատ կարելի ու հաւանական է, որ նոյն միջոցին գտնուած յունական կամ այլ ազգաց տառերով և կամ լեզուներով գրուած գրքերէն քաղած լինի (ինչպէս որ այս Պիւնեցին ուրիշ բաւական թարգմանութիւններ՝ մեկնութիւններ ու հեղինակութիւններ ունի, որոնցմէ մի քանին ձեռքերնիս հասած է). որով և շատ դժուարութիւն չը մնար այս հաղուագիւտ հնութեան վերայ կարևոր և հետաքրքրական պարագաներ յառաջ բերելով՝ տարակուսելի խորհրդածութիւններ և բացատրութիւններով կասկածներ ցոյց տալու. մանաւանդ որ ամէն կերպերով հաւանելու և հաւատալու արժանի է։

Ս՚ըդ մեր այս դուշնաքեայ աշխատութեան մեծի մասին իւր լոյսը վերոյիշեալ թերթերէն քաղելէ զկնի, կ՚փութամ տորև մեր Պ. Կիլեղեցւոյ հիմնադիր առաքելոց՝ աշակերտաց և նոցին յաջորդաց ումանց՝ որքան որ ցարդ գտնել կարելի եղած է, անունները դասակարգելով, գլխաւորապէս՝ իմ այս յառաջկայ գրութեան շարժառիթ բուն նպատակիս համար՝ Թադդէոս առաքեալէն սկսելով մինչև Պ. Լուսաւորիչը անյայտ յաջորդաց անունները ժամանակագրութեամբ դնել, և իմ և ամենասիրելի Ազգայնոցս շատերուն անձուկը մատակարարել։

Ահա և փափագելի էր նա և մինչև մեր օրերը (ց 1866) Գէորգ Գ. Ա. Կաթուղիկոսը՝ ճիշդ առաքելական յաջորդ Կաթուղիկոսաց ևս անունները դնել, բայց այն յայտնի է աւանիկ յեկեղեցական գիրս։

Շարունակելի։

ՊԱՏՄԱԿԱՆ

Արարատեան դաշտի շրջապատ լեռները։

Ա. Մասիս։

Հայաստանեայց աշխարհ.քի առաջի աշխարհահռչակ լեռն պարծանք մեր Հայրենեաց, և մեր Հայկազուն Լ,ահապետներէն Մասիս սեպհական անունը վերառած Մասիս Լ,ահապետէն. որ Հայկայ սերունդէն ութներորդն էր, է Հայաստան աշխարհ.քի Արարատեան դաշտին մէջ. սորա անուանակոչութեան համար խորհնացին կ՚վկայէ, որ Մասիայի անու-